ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Զրաշեն համայնք, հասցե, հեռախոս, էլ. փոստ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» դեկտեմբեր - ի 2011 թվականի N7

ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՉԱՓԸ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ
ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ, ՊԱՇՏՈՆԱՅԻՆ
ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ,,ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ" ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 26-ՐԴ ԿԵՏԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Զրաշեն համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը-13, հաստիքացուցակը, պաշտոնային դրույքաչափերը

1. Համայնքի ղեկավար		130000
2. Աշխատակազմի քարտուղար	1	95000
3. Գլխավոր մասնագետ	1	90000
4. Առաջատար մասնագետ	1	75000
5. Առաջին կարգի մասնագետ	1	74000
6. Երկրորդ կարգի մասնագետ	1	36000
7. Մշակույթի տան տնօրեն	1	35000
8. Գեղմասվար	1	35000
9. Գրադարանավարուհի	1	35000
10. Օպերատոր	1	46000
11. Պահակ-գիշերային	1	45000
12. Հավաքարար	1	35000
13. Պահակ-կատարածու	1	35000

Ավագանու անդամներ՝

Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա. Խաչատրյան		
Ս. Մխիթարյան		
Խ. Սողոյան		
Ռ. Հաջոյան		
Կ. Մխիթարյան		
Մ. Մանուկյան		
Ա. Շահվերդյան		

Համայնքի ղեկավար Լ. Ղազարյան

Աշխ. քարտուղար՝ Վ. Բաղդասարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի
Զրաշեն համայնք, հասցե, հեռախոս, էլ. փոստ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 19 » դեկտեմբեր - ի 2011 թվականի N7

ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012Թ.-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և
ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻ

ՂԵԿԱՎԱՐՎԵԼՈՎ ,,ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ" ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՊԱՀԱՆՋՆԵՐՈՎ

ԶՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Զրաշեն համայնքում 2012թ-ի համար սահմանել տեղական տուրքեր ու վճարներ հետևյալ դրույքաչափերով՝

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների ներառյալ ոչ հիմնական շինարարության տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

հիմնական օբյեկտների համար

1) Մինչև 300մ² ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական ամառանոցային տների ինչպես նաև մինչև 200մ² ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար-7500դրամ

2) Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար

ա. 201-ից մինչև 500մ² ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15000 դրամ

բ. 501 -ից մինչև 1000մ² ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25000 դրամ

գ. 1001-ից և ավել մ² ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար մինչև 35000 դրամ

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար

3) մինչև 20մ² ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1500 դրամ

4) 20 և ավել մ² ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2500 դրամ

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլանող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն 1500 դրամ:

2) Բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլանող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն կետի սահմանված <<ա>> ենթակետի դրույքաչափը կիրառվում է նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր

մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն մասով:

3) Նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլանող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն,որի նկատմամբ կիրառվում է նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է 2500 դրամ:

4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքի և /կամ/ ծխախոտի արտադրանքի վաճառքի իրացման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է

1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար -1500դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար 1500 դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) Բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

2) Հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը 2012թ-ի համար սահմանվում է 150000դրամ:

6. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները) խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար սահմանվում է

1) առևտրի օբյեկտների համար	25000 դրամ
2) հանրային սննդի, զվարճանքի օբյեկտների համար	50000 դրամ
3) բաղնիքների (սաունաների) համար	200000 դրամ
4) խաղատների կազմակերպման համար	500000 դրամ
5) շահումով խաղերի կազմակերպման համար	250000 դրամ
6) վիճակախաղերի կազմակերպման համար	100000 դրամ

7. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենները և կրկնօրինակները տրամադրելու համար տեղական տուրքը 2012թ-ի համար սահմանվում է 1000 դրամ:

8. Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու,(բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը 2012թ-ի համար սահմանվում է 3000 դրամ:

9. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերը ՀՀ կառավարության սահմանած ցանկում գյուղական համայնքներում կիրառված է 0.5 գործակից:

10. Մրցույթի և աճուրդի մասնակցության վճար 1000 դրամ

Ավագանու անդամներ՝

Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)
Ա. Խաչատրյան		
Ս. Մխիթարյան		
Խ. Սողոյան		
Ռ. Հաջոյան		
Կ. Մխիթարյան		
Մ. Մանուկյան		
Ա. Շահվերդյան		

Համայնքի ղեկավար Ա. Ղազարյան

Աշխ. քարտուղար՝ Ա. Բաղդասարյան